II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
(Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման 90-ամյակի առթիվ)

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

1920-ական թվականների սկզբին ստեղծվեցին Խորհրդային Հայաստանի գիտական առաջին հիմնարկները, որոնց գործունեությունը ղեկավարում էր ՀՍԽՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ակադեմիական կենտրոնը: ՀՍԽՀ հեղափոխական կոմիտեի 1921 թ. փետրվարի 5-ի «Էջմիածնի գույքի մի մասը լուսավորության ժողովրդական կոմիսարիատին հանձնելու մասին» դեկրետով «հանձնարարվում է լուսժողկոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատությունների պետականացրած ցանցը՝ մատենադարան, թանգարան, տպարան և այլն և հիմնել Էջմիածնում կուլտուր-պատմական ինստիտուտ, որը նպատակ պիտի ունենա գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրայի ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական ու գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»[1]: Այս դեկրետով հիմնված Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը Հայաստանի գիտահետազոտական անդրանիկ ինստիտուտն էր, որի իրավասությանն են հանձնվում մատենադարան-ձեռագրատունը, թանգարանը, տպարանը, վեհական հանրակացարանը, Հռիփսիմեի վանքը, Զվարթնոց եկեղեցու ավերակները՝ հարակից շինություններով և այլն:

Դեռևս փետրվարի 2-ին ինստիտուտի առաջին նիստում հաստատվում է գիտական կոլեգիայի հետևյալ կազմը. Լևոն Սարգսյան՝ նախագահ, Երվանդ Տեր-Մինասյան՝ գիտնական քարտուղար, Սենեքերիմ Տեր-Հակոբյան՝ մատենադարանի վարիչ և Լևոն Լիսիցյան՝ թանգարանի վարիչ (մինչև փետրվարի 1-ը վերջինս Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատությունների կոմիսարն էր): Լ. Սարգսյանը նշանակվում է նաև ինստիտուտի կոմիսար և ժամանակավոր վարիչ: Ինստիտուտի գիտական կոլեգիային հանձնարարվում է մշակել կանոնադրության նախագիծ: Հրավիրվում են նաև աշխատակիցներ՝ Արշակ Բարխուդարյանը, Թադևոս Ավդալբեգյանը և Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Սակայն դաշնակցականների փետրվարյան ապստամբությունը ժամանակավորապես ընդհատում է ինստիտուտի գործունեությունը: Քաղաքացիական կռիվների անմեղ զոհ է դառնում ինստիտուտի հիմնադիրներից մեկը՝ Մյունխենի,

[1] *ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 107-108:*

Մոսկվայի և Վիեննայի համալսարաններում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ տաղանդավոր գիտնական Լևոն Լիսիցյանը:

Կուլտուր-պատմական ինստիտուտի աշխատանքները վերսկսվում են 1921 թ. ապրիլի սկզբին: Մայիսի 1-ից ինստիտուտի կոմիսար և գիտական կոլեգիայի նախագահ է նշանակվում Կարապետ Մելիք-Օհանջանյանը, կոլեգիայի անդամներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (թանգարանի վարիչ) և Խաչիկ Սամվելյանը (տպարանի վարիչ): Գիտական կոլեգիայի նոր կազմն իր առաջին նիստում, որը տեղի ունեցավ 1921 թ. մայիսի 25-ին, որոշեց մատենադարանի արխիվային բաժինը կարգավորելու և ցուցակագրելու համար աշխատակից հրավիրել Գյուտ ծայրագույն վարդապետ Տեր-Ղազարյանին[2]:

1921 թ. մայիսի 26-ին լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը, Էջմիածին ժամանելով, հրավիրում է հատուկ ժողով և առաջարկում ինստիտուտը վերակառուցել այնպես, որ վերջինս իր հետազոտությունների ոլորտն ընդգրկի Հայաստանի ուսումնասիրությունը նաև աշխարհագրական, երկրաբանական, օդերևութաբանական, հողային, ջրաբաշխական, տնտեսական գոտիների և այլ տեսանկյուններից, բացի կուլտուր-պատմական բաժնից ունենա բնագիտական բաժին ևս: Նույն օրը որոշվում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը վերանվանել Էջմիածնի գիտական ինստիտուտ: Լուսժողկոմը հայտնում է, որ ինստիտուտի անձնակազմն ուժեղացնելու նպատակով իր կողմից գիտական աշխատակիցներ են հրավիրվել Առաքել Բաբախանյանը (Լեո) և Հրաչյա Աճառյանը: Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և հուլիսի 6-ին գիտաշխատակից է ընտրվում և հաստատվում Դավիթ Տեր-Դանիելյանը (Անանուն), սեպտեմբերի 19-ին՝ Թորոս Թորամանյանը, հոկտեմբերի 4-ին էլ՝ Գրիգոր Չուբարյանը: 1921 թ. վերջին – 1922 թ. սկզբին վարչական իրավասությունների կրճատման հետևանքով ինստիտուտը ամփոփվում է միայն մատենադարանում և զբաղվում գիտական հրատարակությունների, գրական-գիտական զեկուցումների ու հանրամատչելի դասախոսությունների կազմակերպմամբ: 1922 թ. հունվարի 6-ից ինստիտուտի փոխնախագահ է հաստատվել Սենեքերիմ Տեր-Հակոբյանը[3]:

Ինստիտուտի կանոնադրության խնդիրը նոր ընթացք է ստանում 1922 թ. սկզբից, կրկին քննության ենթարկվում կոլեգիայում և, վերջնական ձևակերպում ստանալով, հաստատվում է լուսավորության ժողկոմ Պողոս Մակինցյանի կողմից մայիսի 11-ին: Կանոնադրության համաձայն, գիտահետազոտական հիմնարկը վերանվանվում է Հայաստանի գիտական ինստիտուտ: Այն ունենալու էր հետևյալ բաժանմունքները՝ ա. Հնագիտական, ազգագրական և գեղարվեստի պատմության, բ. Լեզվագիտական և ցեղաբանական, գ. Բանասիրական, դ. Պատմական-հասարակագիտական: Ինստիտուտի անձնակազմը բաղկացած էր նախագահից, գիտնական քարտուղարից և իսկական անդամներից, որոնք էլ կազմում էին ինստիտուտի

---

[2] *Տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» (Էջմիածին), գիրք Ա և Բ, 1921–1922, էջ 321–322:*

[3] *Նույն տեղում, էջ 324:*

խորհուրդը: Բացի իսկական անդամներից, այն կարող էր ունենալ նաև պատվավոր ու թղթակից անդամներ, գիտական աշխատակիցներ:

Կուլտուր-պատմական ինստիտուտի գոյության առաջին իսկ տարվանից զգալի աշխատանք կատարվեց մատենադարանի և ձեռագրատան պահպանության, կարգավորման և զարգացման ուղղությամբ: 1922 թ. հունիսի տվյալներով, ձեռագրատունը Թավրիզից ուղարկած 83 և մատենադարանի կողմից ձեռք բերած ձեռագրերի հետ ուներ 1730 հայերեն, ինչպես նաև արևելյան լեզուներով 57 ձեռագիր, 410 պատառիկ և անտիպ գրական աշխատանքների 1 ժողովածու: Տպագրերի բաժնում, որը կազմված էր նախկին վանական և Գևորգյան հոգևոր ճեմարանի մատենադարանների միացումից, տարբեր լեզուներով կար 28.765 հատոր գրականություն՝ բացի պարբերականներից: Մատենադարանը զանազան հիմնարկներից ու մարդկանցից ստացել էր 1.500 անուն գիրք և թերթ, իսկ դրանցից պարբերաբար օգտվողների թիվը եղել է 136[4]:

Նշանակալից և արդյունավետ գործունեություն էր ծավալել ինստիտուտի տպարանը, որտեղ տպագրվել են տասնյակ լրագրեր, դասագրքեր, ծրագրեր, ժողովածուներ, օրացույց, ՀՍԽՀ առաջին սահմանադրությունը, մի շարք աշխատություններ և այլն: Ընդամենը մեկ տարում «Բնագիրներ և հետազոտություններ» շարքից հրատարակվել են հետևյալ չորս գրքերը՝ «Շապհոյ Բագրատունւոյ Պատմութիւն»՝ աշխատասիրությամբ Գալուստ Տեր-Մկրտչյանի և Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի (1921 թ.), Աշոտ Հովհաննիսյան. «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը: Պատմական-քննադատական ուսումնասիրութիւն» (1921 թ.), «Աբրահամու Խոստովանողի Վկայք Արևելից, թարգմանութիւնք ցաստրականէն»՝ աշխատասիրությամբ Գալուստ Տեր-Մկրտչյանի (1921 թ.), Դավիթ Անանուն. «Ռուսահայերի հասարակական զարգացումը, 1870–1900», հ. երկրորդ (1922 թ.):

1922 թ. ամռանը գիտական քարտուղար Ե. Տեր-Մինասյանի խմբագրությամբ լույս տեսավ «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա. և Բ., 1921–1922» հանդեսը, որի «Երկու խոսք»-ում նշված է. «Գիտական ինստիտուտի Բանբերը» իր առաջնակարգ նպատակն է համարում միջոց ընձեռել գիտական ուսումնասիրության ենթարկելու Հայաստանի աշխարհագրությունն ու ազգագրությունը, տնտեսական կացությունն ու հարաբերությունները, պատմությունն ու գրականությունը, հնագիտությունն ու արվեստը և այլն: Եվ այս հայրենաշեն գործի շուրջը համախմբվելու կոչ է անում՝ լավագույն ապագայի ակնկալությամբ՝ Հայ գիտության բոլոր մշակներին»[5]:

Էջմիածնի ինստիտուտը կապեր էր հաստատել Խորհրդային Միության հանրապետությունների և արտասահմանի գիտական մի շարք հիմնարկների հետ: Մասնավորապես, գիտական հրատարակությունների փոխանակում էր կատարվում ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հետ: Այդ մասին է վկայում ԳԱ մշտական ակադեմիկոս քարտուղար Սերգեյ Օլդենբուրգին ուղղված մի պաշտոնական նամակ, որի պատճենը պահպան-

---

[4] *Նույն տեղում, էջ 324-325:*

[5] *Նույն տեղում, էջ III:*

Լևոն Սարգսյան

Սենեքերիմ Տեր-Հակոբյան

Լևոն Լիսիցյան

Կարապետ Մելիք-Օհանջանյան

Երվանդ Տեր-Մինասյան

Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան

Խաչիկ Սամվելյան

վել է[6]: 1924 թ. հոկտեմբերի 6–9-ը Մյունխենում կայանալիք Գերմանիայի արևելագետների համագումարին մասնակցելու համար հրավիրվել էր ինստիտուտի մատենադարանի և թանգարանի վարիչ Մենեքերիմ Տեր-Հակոբյանը, որը գործուղվելու դեպքում զեկուցելու էր «Խորհրդային Հայաստանում ի նպաստ արևելագիտության գծով կատարվող աշխատանքները» և «Նախարմեն նյութական մշակույթի մնացորդները Խորհրդային Հայաստանում» թեմաներով:

1925 թ. հունվարին Հայաստանի գիտական ինստիտուտի հիման վրա ստեղծվում է ակադեմիական կառուցվածք ունեցող և այդպիսի սկզբունքով գործող բարձրագույն գիտահետազոտական հիմնարկ՝ ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտը:

ПЕРВЫЙ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ АРМЕНИИ

(К 90-летию основания Эчмиадзинского культурно-исторического института)

СТЕПАН ГАРИБДЖАНЯН

Р е з ю м е

5 февраля 1921 г. декретом Ревкома и Наркомпроса Армении были национализированы и переданы в непосредственное ведение Наркомпроса ССРА культурно-просветительные и церковные учреждения Эчмиадзина–матенадаран, музей, типография, храм Рипсимэ, развалины собора Звартноц с прилегающими постройками и т. д. На этой базе в Эчмиадзине был создан культурно-исторический институт, который явился первым научно-исследовательским институтом Советской Армении. 26 мая 1921 г. институт был переименован в Эчмиадзинский научный институт, который должен был иметь также отдел естествознания и заниматься изучением географии, геологии, водных ресурсов и почв, метеорологии Армении с учетом потребностей народного хозяйства. В 1922 г. вышел первый и единственный номер журнала института «Вестник Научного института Армении. Книга А и Б, 1921–1922». За два года деятельности институт пополнил хранилище древних рукописей–матенадаран–новыми рукописями, создал богатую научную библиотеку, которой пользовались многие научные работники. В типографии института было отпечатано большое количество научных трудов и учебников.

[6] *Մաշտոցի անվան Մատենադարան, գրասենյակի արխիվը, թղթ. 76, վավ. 67, թ.1:*

THE FIRST SCIENTIFIC-RESEARCH INSTITUTE OF ARMENIA
(To the 90th anniversary of foundadtion of the Echmiadzin cultural-historical institute)

STEPAN GHARIBJANYAN

S u m m a r y

On February 5, 1921 by the decree of the Revolutionary Committee of Armenia and Narcompros were nationalized and transferred to the direct supervision of Narcompros SSRA cultural-educational and ecclesiastical foundations of Echmiadzin – Matenadaran, the museum, the printing house, the temple of Hripsime, the ruins of the Zvartnots cathedral with adjoining buildings, etc. On this basis, cultural and historical institution was established in Echmiadzin, which was the first scientific-research institute of Soviet Armenia. On May 26, 1921 the Institute was renamed as Echmiadzin Research Institute, which was also to have a department of natural science and to be engaged in the study of geography, geology, water resources, soils, meteorology of Armenia to meet the needs of economy. In 1922 it released its first and the only issue of the journal of the Institute "Bulletin of the Scientific Institute of Armenia: Book A and B, 1921–1922". Over two years of its activity the institute enriched the repository of ancient manuscripts, Matenadaran, with new manuscripts, created a rich scientific library, which was used by many scientists. In the printing house of the Institute a large number of scientific papers and textbooks was printed.